Ադրբեջանը խախտում է միջազգային իրավունքը Լեռնային Ղարաբաղի էլեկտրամատակարարման խափանումների համատեքստում

5 հուլիսի 2023թ.

Կոնտակտային անձ՝ Լոռի Ենի-Գոմշյան, Մարինա Սիմոնյան, Անահիտ Հարությյան
info@cftjustice.org
2100 Մոնթրոսի պող. #715, Մոնթրոս, Կալիֆորնիա 91020
Ճշմարտության և արդարության կենտրոնը (ՃԱԿ) 501(c)(3) գրանցված կորպորացիա է
ԱՄՆ դաշնային հարկ վճարողի հաշվառման համար # 87-1681664
www.CFTJustice.org
@CFTJustice @CFTJustice @CFTJustice

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Ընդհանուր տեղեկություններ 3
3. Միջազգային իրավունք 7
4. Միջազգային իրավունքների շրջանակներում խախտված իրավունքներ 9
բ. Տնտեսական ազատության իրավունք 10
գ. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք 10
դ. Խոշտանգումներից զերծ մնալու իրավունք 11
ե. Բավարար կենսամակարդակի իրավունք 12
զ. Կրթության իրավունք 12
5. ԱրցախԷներգո 15
6. Եզրակացություն 18

Ադրբեջանը խախտում է միջազգային իրավունքը Լեռնային Ղարաբաղի էլեկտրամատակարարման խափանումների համատեքստում

1. Ներածություն

Արդեն ավելի քան վեց ամիս է, ինչ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 120 հազար բնակիչները դաժան շրջափակման են ենթարկվել Ադրբեջանի կողմից: Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կապող Լաչինի միջանցքն արգելափակվել է՝ դրանով իսկ ամբողջ տարածաշրջանը կտրելով արտաքին աշխարհից: Բնակչությունը զրկված է առաջին անհրաժեշտության ապրանքներից՝ սննդամթերք, դեղորայք, գազը և էլեկտրաէներգիա: Ստորև ներկայացվող զեկույցը նվիրված է լինելու, մասնավորապես, էլեկտրամատակարարման ընդհատումներին և Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա մարդու իրավունքների այս խախտումների ազդեցությանը:

Ստորև բերված վկայությունները հավաքվել են Ճշմարտության և արդարադատության կենտրոնի կողմից: Ճշմարտության և արդարադատության կենտրոնը (The Center for Truth and Justice) 501(c)(3) շահույթ չհետապնդող ամերիկյան կազմակերպություն է, որը գտնվում է Կալիֆորնիայի Լոս Անջելես քաղաքում: Կենտրոնը փաստագրում է 2020թ. Ղարաբաղյան պատերազմից ի վեր մարդու իրավունքների խախտումները և հայերի դեմ պատերազմական հանցագործությունները: Ճշմարտության և արդարադատության կենտրոնը տարածաշրջանում ստեղծել է փաստահավաք ենթակառուցվածք և անձամբ տուժողներից հավաքագրում է վկայություններ՝ առաջին ձեռքից: Կենտրոնի կողմից կիրառվող՝ ապացույցների հավաքագրման մեթոդաբանությանը կարելի է ծանոթանալ այստեղ՝ Մեթոդաբանություն: Կենտրոնը պահպանում է ապացույցները և դրանք հասանելի դարձնում կրթական նպատակների, շահերի պաշտպանության և հնարավոր դատական գործընթացների համար: Կենտրոնի թիմը կազմված է ԱՄՆ-ի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի փաստաբաններից և իրավաբանական ֆակուլտետի ուսանողներից, ինչպես նաև մարդու իրավունքների ջատագովողներից և այլ մասնագետներից:

2. Ընդհանուր տեղեկություններ

2020 թվականի Ղարաբաղյան պատերազմից հետո Լաչին (Բերձոր) քաղաքը գտնվում էր ռուս խաղաղապահների վերահսկողության տակ մինչև 2022 թվականի օգոստոսի 26-ը, երբ հրադադարի համաձայնագրով քաղաքը հանձնվեց Ադրբեջանին: Այդ ժամանակ մնացած հայ բնակչությունը ստիպված էր տարհանվել քաղաքից: «2022 թվականի սեպտեմբերին բացվեց Լաչինի միջանցքի նոր երթուղին, որը գտնվում է Լաչին (Բերձոր) քաղաքի հենց հյուսիսում: Էլեկտրահաղորդման գծերն ու գազատարները մնացել են հին ճանապարհի հարևանությամբ[1]»: Այնուհետև, 2023 թվականի հունվարին, շրջափակումից մոտ մեկ ամիս անց վթարվեց էլեկտրահաղորդման գիծը[2]: «ԱրցախԷներգո»-ի տնօրենի խոսքով, եթե Ադրբեջանը թույլ տա վերականգնել իր վերահսկողության տակ գտնվող էլեկտրական մալուխը, մասնավորապես Բերձոր-Աղավնո գծի 30-րդ կմ-ի հատվածում, ապա վթարի վերականգնումը կավարտվի մի քանի ժամվա ընթացքում[3]: Սակայն Ադրբեջանն արդեն մոտ երկու ամիս է թույլ չի տալիս հայ

[1] Անի Ավետիսյան «Էներգիտիկան որպես զենք օգտագործելը. Լեռնային Ղարաբաղի էներգամատակարարումը պաշարման մեջ է» *Evn Report*, https://evnreport.com/spotlight-karabakh/weaponizing-energy-nagorno-karabakhs-energy-supplies-under-siege

[2] Արցախը Հայաստանից սնուցող միակ բարձրավոլտ գիծը վթարվել է. «Արցախէներգո», *Azatutyun.am https://www.azatutyun.am/a/32216963.html*

[3] Ղարաբաղի էներգետիկ ընկերության տնօրեն. Արդեն մեկ ամիս է՝ ադրբեջանցիները հնարավորություն չեն տալիս վերականգնել էլեկտրահաղորդման գծի վթարը, https://news.am/eng/news/742387.html

մասնագետներին մտնել այդ տարածք՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

«Դժվար է միանշանակ ասել՝ արդյոք վթարը տեխնիկական է, թե կողմնակի միջամտության արդյունք: Հաշվի առնելով այն, որ արդեն մոտ մեկ ամիս է՝ ադրբեջանցիները մեզ հնարավորություն չեն տալիս վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնել, դա հիմք է տալիս կասկածելու, որ արհեստական միջամտություն է եղել: Ընդ որում, վթարը բարդ հետևանքներ չի ունեցել և այն կարելի է վերականգնել ժամերի ընթացքում», NEWS.am-ի հետ զրույցում նշել է «ԱրցախԷներգո» ընկերության տնօրեն Անդրանիկ Խաչատրյանը[4]:

Անկախ նրանից, թե Ադրբեջանը միտումնավոր է վնասել էլեկտրահաղորդման գիծը, թե ոչ, կասկած չկա, որ նրանց ակտիվ դերը ցանկացած վերանորոգման աշխատանքների կանխարգելման գործում խաթարել է էլեկտրաէներգիայի հասանելիությունը Լեռնային Ղարաբաղում: Էլեկտրահաղորդման գծի վթարից հետո Լեռնային Ղարաբաղը հույսը դնում է տեղական էլեկտրաէներգիայի սահմանափակ արտադրության վրա[5]: Մասնավորապես, տարածաշրջանում էլեկտրաէներգիայի սպառումը ներկայումս ապահովվում է Սարսանգի ՀԷԿ-ի հաշվին, սակայն դրա հզորությունը սահմանափակ է[6]: Այդ իսկ պատճառով «ԱրցախԷներգո» ընկերությունը սկսել և շարունակում է իրականացնել էլեկտրաէներգիայի պլանային անջատումներ, որոնք ի սկզբանե երկու ժամից դարձել են օրական վեց ժամ[7]: Սակայն էլեկտրաէներգիայի պահանջարկը մեծանում է նաև այն պատճառով, որ Ադրբեջանը պարբերաբար դադարեցնում է Լեռնային Ղարաբաղ բնական գազի մատակարարումը[8]: Իսկ Սարսանգի հիդրոէլեկտրակայանից կախվածությունը չի կարող երկարաժամկետ պահպանվել: Սարսանգի ՀԷԿ-ն «ամեն օր զգալիորեն նվազեցնում է իր ջրի ծավալները: Դա նշանակում է, որ շուտով Արցախը [Լեռնային Ղարաբաղ] ամբողջությամբ կհայտնվի խավարի մեջ»[9]:

[4] Ղարաբաղի էներգետիկ ընկերության տնօրեն. Արդեն մեկ ամիս է՝ ադրբեջանցիները հնարավորություն չեն տալիս վերականգնել էլեկտրահաղորդման գծի վթարը, , https://news.am/eng/news/742387.html

[5] Անի Ավետիսյան «Էներգիտիկան որպես զենք օգտագործելը. Լեռնային Ղարաբաղի էներգամատակարարումը պաշարման մեջ է» *Evn Report*, https://evnreport.com/spotlight-karabakh/weaponizing-energy-nagorno-karabakhs-energy-supplies-under-siege

[6] Ղարաբաղի էներգետիկ ընկերության տնօրեն. Արդեն մեկ ամիս է՝ ադրբեջանցիները հնարավորություն չեն տալիս վերականգնել էլեկտրահաղորդման գծի վթարը, https://news.am/eng/news/742387.html

[7] Ղարաբաղի էներգետիկ ընկերության տնօրեն. Արդեն մեկ ամիս է՝ ադրբեջանցիները հնարավորություն չեն տալիս վերականգնել էլեկտրահաղորդման գծի վթարը, https://news.am/eng/news/742387.html

[8] Ղարաբաղի էներգետիկ ընկերության տնօրեն. Արդեն մեկ ամիս է՝ ադրբեջանցիները հնարավորություն չեն տալիս վերականգնել էլեկտրահաղորդման գծի վթարը, https://news.am/eng/news/742387.html

[9] Մանե Բաբաջանյան «Լաչինի միջանցքի ճգնաժամը. Հերթական հումանիտար աղետի շեմին», *The Armenian Weekly*, https://armenianweekly.com/2023/02/15/the-crisis-of-the-lachin-corridor-on-the-verge-of-another-humanitarian-catastrophe



Միևնույն ժամանակ, արբանյակային պատկերները ցույց են տալիս Լաչինում (Բերձոր) էլեկտրակայանների փոփոխություններ: Այստեղ ներկայացված Google Maps-ի պատկերները և համապատասխանաբար 2022թ. հուլիսի 29-ին, 2023թ. հունվարի 23-ին և 2023թ. մարտի 25-ին արված մասնավոր արբանյակային պատկերները համեմատելիս պարզվում է, որ որոշ էլեկտրաբաշխիչ վահանակներ, ըստ երևույթին, հեռացվել են այս ժամանակահատվածում:

planet
planet

Ինչպես քննարկվում է ստորև, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի էլեկտրամատակարարման խափանումը միջազգային իրավունքի ակնհայտ խախտում է և արդեն իսկ զգալի հումանիտար ազդեցություն է ունեցել Լեռնային Ղարաբաղում ապրողների վրա:

3. Միջազգային իրավունք

Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդն ունեն տարբեր պայմանագրեր, որոնք վավերացվել են Ադրբեջանի կողմից և որոնք հիմք են հանդիսանում մարդու հիմնարար իրավունքների համար և որոնց համաձայն Ադրբեջանը ստանձնել է պարտավորություններ: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

ա. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (UNDHR) (1948թ.) (Քանի որ Գլխավոր ասամբլեայի բանաձևը պարտադիր ուժ չունի, այնուամենայնիվ, այն կարևոր ազդեցություն է ունեցել պարտադիր ուժ ունեցող այլ պայմանագրերի մշակման վրա և ստացել է միջազգային սովորութային իրավունքի կարգավիճակ).

բ. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան (CAT) (1984թ.), որը Ադրբեջանի կողմից վավերացվել է 1996թ. օգոստոսի 16-ին.

գ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (CESCR) (1976թ.), որն Ադրբեջանը վավերացրել է 1992թ. օգոստոսի 13-ին.

դ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (CCPR) (1976թ.), որն Ադրբեջանը վավերացրել է 1992թ. օգոստոսի 13-ին:

ե. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (ECHR) (1950), որն Ադրբեջանը վավերացրել է 2022թ. ապրիլի 15-ին.

զ. Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբեմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան (ETS No. 126) (1987թ.), որն Ադրբեջանը վավերացրել է 2002թ. ապրիլի 15-ին:

Այն փաստը, որ այդ պայմանագրերը վավերացվել են և ուժի մեջ մտել, կասկած չպետք է լինի, որ դրանք պարտադիր են Ադրբեջանի համար: Այնուամենայնիվ, Ադրբեջանը վերապահումներ կամ հայտարարություններ է արել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ETS No. 005) և Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի (ETS No. 126) առնչությամբ, որում ասվում է, որ «[Ա]դրբեջանի Հանրապետությունը հայտարարում է որ ի վիճակի չէ երաշխավորել կոնվենցիայի դրույթների կիրառումը Հայաստանի Հանրապետության կողմից օկուպացված տարածքներում, քանի դեռ այդ տարածքները չեն ազատվել այդ օկուպացիայից…»[10] Փաստորեն, Եվրոպայի խորհրդի հետ գրեթե յուրաքանչյուր պայմանագիր պարունակում է նույն նախապայմանը կամ նախազգուշացումը: Սակայն «Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» թիվ 40167/06 (ՄԻԵԴ, 6 հունիսի 2015թ.) գործով ընդունելիության վերաբերյալ իր որոշման մեջ Դատարանը գտել է, որ վերապահումը «ի զորու չէ սահմանափակել Կոնվենցիայի տարածքային կիրառումը Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքի կոնկրետ հատվածների նկատմամբ (մեջբերումը բաց է թողնվել) և չի համապատասխանում օրինական վերապահման պահանջներին (մեջբերումը բացակայում է)»:

Այսպիսով, այս վերապահումն Ադրբեջանին ազատություն չի տալիս այդ տարածքներում մարդկանց նկատմամբ մարդու իրավունքների ոտնահարման համար: Եթե Ադրբեջանի պնդումն այն է, որ Լեռնային Ղարաբաղի տարածքը չի գտնվում իր վերահսկողության տակ և հետևաբար այն չի կարող երաշխավորել պայմանագրերի պահանջների պահպանումը տարածաշրջանում, ապա դա չի խանգարում Ադրբեջանին երաշխավորել, որ իր սեփական կառավարությունը պահպանում է պայմանագրի պահանջները նույնիսկ Լեռնային Ղարաբաղի տարածքի նկատմամբ: Այլ կերպ ասած, եթե Ադրբեջանում իրականացվում է պետական քաղաքականություն, որը նպատակաուղղված շեղվում է կոնվենցիայի դրույթներից և ոտնահարում է Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող ժողովրդի մարդու իրավունքները, դա, միևնույն է, խախտում է՝ անկախ որևէ վերապահումից: Ադրբեջանը դեռևս պարտավորություններ ունի այդ պայմանագրերով: Ադրբեջանը չի կարող դիտարկել/համարել Լեռնային Ղարաբաղը մարդու հիմնարար իրավունքներին ոչ արժանի:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի պայմանագրերին, ապա Ադրբեջանը նման վերապահումներ չի արել: Փաստորեն, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի հետ կապված այն հաստատել է Կոնվենցիան»: …Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը հայտարարում է, որ ճանաչում է Խոշտանգումների դեմ կոմիտեի իրավասությունը՝ ստանալ և դիտարկել իր իրավասության տակ գտնվող անձանցից կամ նրանց անունից հաղորդումներ, ովքեր պնդում են, որ մասնակից պետության կողմից Կոնվենցիայի դրույթների խախտման զոհ են դարձել»[11]: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի հետ կապված և՛ Հայաստանը, և՛ թե Ադրբեջանը Գլխավոր քարտուղարին տեղեկացրել են 2020 թվականի պատերազմի ժամանակ ռազմական դրություն հայտարարելու մասին, սակայն Ադրբեջանը

[10] https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=declarations-by-treaty&numSte=126&codeNature=0 և https://www.coe.int/en/web/conventions/concerning-a-given-state-or-the-european-union-

[11] https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=IND&mtdsg_no=IV-9&chapter=4&clang=_en#EndDec

ռազմական դրության ավարտը նշել է 2020 թվականի դեկտեմբերի 12-ը:

Վերոնշյալ պատճառներով Ադրբեջանը պարտավորություններ ունի վերը նշված պայմանագրերով:

4. Միջազգային իրավունքների շրջանակներում խախտված իրավունքներ

ա. Կյանքի իրավունք

Ադրբեջանն, առնվազն, ակտիվորեն խոչընդոտում է էլեկտրահաղորդման գծերի ցանկացած վերանորոգման աշխատանքներին: Դա ինքնին կյանքի իրավունքի խախտում է, որը երաշխավորված է միջազգային իրավունքով: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք»: Սա արտացոլված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 3-րդ մասում, այն է՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անքակտելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր կյանքից…» Նույն կերպ դա արտացոլված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածում՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պետք է պաշտպանվի օրենքով»:

Նախ, առանց էլեկտրաէներգիայի մարդիկ պատշաճ կերպով չեն սնվում: 23LC-NK0030 վկայի խոսքով, իրենք փորձում են հարմարվել իրավիճակին՝ կարողանում են տաքացնել սնունդը այնժամ երբ առկա է էլեկտրաէներգիան:

Առանց էլեկտրաէներգիայի հիվանդանոցները չեն կարող պատշաճ կերպով աշխատել, իսկ մարդիկ չեն կարող համապատասխան բժշկական օգնություն ստանալ: Օրինակ՝ 23LC-0003 վկան զանգահարել է Կարմիր խաչի միջազգային կոմիտե, որտեղ կնոջը հայտնել են, որ նրանք [Երևան] են տեղափոխում միայն ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդներին, քանի որ առանց էլեկտրաէներգիայի և գազի նրանք չեն կարող վիրահատություններ կատարել: 23LC-NK0028 վկան ևս հաստատել է, որ Լեռնային Ղարաբաղում չկան հիվանդանոցներ, որոնք հնարավորություն ունեն վիրահատություններ կատարել, և Կարմի խաչի օգնությամբ հիվանդները տեղափոխվում են Հայաստան:

Կարևոր է նշել, որ էլեկետրաէներգիայից զրկելը, Լեռնային Ղարաբաղում մյուս ճգնաժամերից բացի, վնասակար ազդեցություն է ունենում բնակիչների հոգեկան և ֆիզիկական առողջության վրա, որն ուղղակիորեն ազդում է կյանքի իրավունքի վրա: Մարդկանց առողջության վրա ազդեցությունն իր հերթին ազդում է նրանց կյանքի իրավունքի վրա: Մասնավորապես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը:

22LC-NK0011 վկան օրինակ է բերում, որ առանց գազի և էլեկտրաէներեգիայի շատ տներ չունեն տաք ջուր, ինչն ինքնին հսկայական ազդեցություն է ունեցել մարդկանց հոգեկան առողջության վրա:

Բացի այդ, էլեկտրահաղորդման գծերի վթարի պայմաններում Արցախը հույսը դնում է Սարսանգի ջրամբարի վրա (առավել մանրամասն քննարկվում է ստորև): Սա բնապահպանական աղետի պատճառ է դարձել Արցախում, քանի որ ջրամբարի ցածր մակարդակը խոչընդոտում է

հողային միջավայր ջրի ներծծմանը և ստորգետնյա ջրային աղբյուրներին սնուցմանը[12]: Էկոլոգիական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունն ազդում է կյանքի իրավունքի վրա:

Վերջում հարկ է նշել, որ էլեկտրամատակարարման խափանումը կյանքի իրավունքի ուղղակի խախտում է:

բ.Տնտեսական ազատության իրավունք

Էլեկրահաղորդման գծերի վերանորոգման ցանկացած աշխատանք կանխելու՝ Ադրբեջանի գործողությունները, միջազգային իրավունքի համաձայն, տնտեսական ազատության իրավունքի խախտում են: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք անկաշկանդ որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատ ապահովում իրականացնում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը: Իրենց նպատակներին հասնելու համար բոլոր ժողովուրդները կարող են ազատ տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց վնասելու միջազգային տնտեսական համագործակցությունից բխող որևէ պարտավորության, որը հիմնված է փոխշահավետության սկզբունքի և միջազգային իրավունքի վրա: Ոչ մի դեպքում չի կարելի ժողովրդին զրկել սեփական ապրուստի միջոցներից:

Էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով ձեռնարկությունները փակվել են կամ տուժել այլ կերպ: 23LC-NK0030 վկան զբաղվում է հյուրանոցային բիզնեսով և պատմում էր, որ շրջափակման պատճառով իր բիզնեսի անվտանգությունն ու որակը վատթարացել են: 22LC-NK0011 վկան, ով նույնպես զբաղվում է հյուրանոցային բիզնեսով, շրջափակման ժամանակ զրոյական եկամուտ է ունեցել իր հյուրանոցից: Նրա կանխատեսմամբ՝ 2023 թվականի փետրվարին նա ստիպված կլինի փակել հյուրանոցը: Շատերը չեն կարող աշխատել և պահել իրենց ընտանիքները: 23LC-NK0030 վկայի խոսքով՝ շրջափակման ընթացքում 4 700 մարդ կորցրել է աշխատանքը:

23LC-NK0030 վկան ընդգծում է, որ էլեկտրաէներգիայի բացակայությունը ոչ միայն ազդում է լույսի և ջերմության, այլև մարդկանց աշխատունակության վրա, և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի ներքին հնարավորությունները՝ պարզ չէ, թե որքան ժամանակ նրանք կարող են դիմանալ:

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ոչ միայն զրկվել է ինքնորոշման իրավունքից, այլ նաև սեփական գոյության միջոցներից, ինչը վերը նշված դրույթի ուղղակի խախտում է: Այսպիսով, էլեկտրամատակարարման խափանումը տնտեսական ազատության իրավունքի ուղղակի խախտում է:

գ. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Էլեկրահաղորդման գծերի վերանորոգման ցանկացած աշխատանք կանխելու՝ Ադրբեջանի գործողությունները, միջազգային իրավունքի համաձայն, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտում են: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է. «[Յ]ուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության

[12] «Սարսանգի ջրամբարի դատարկվելը հանգեցնելու բնապահպանական աղետի». Ալիք մեդիա, https://www.aliqmedia.am/2023/05/12/108744/

իրավունք»: Էլեկտրաէներգիայի բացակայության պայմաններում մարդիկ ինտերնետից կամ հեռախոսից օգտվելու հնարավորություն չունեն: Ինտերնետի և հեռախոսի հասանելիությունը խիստ անհրաժեշտ է արտակարգ իրավիճակներում և ընդհանրապես՝ արտաքին աշխարհի հետ հասանելիություն և տեղեկույթուն ունենալու/ապահովելու համար: 22LC-NK0011 վկան նշեց, որ ինտերնետն առօրյա կյանքի մի մասն է և լուրեր ստանալու միջոց: Առանց ինտերնետի նրանք տեղեկացված չեն, ինչը նա համարում է հիմնարար իրավունք: Նույնիսկ ինտերնետի առկայության դեպքում արագությունը սահմանափակ է: Երբեմն հեռախոսագիծը խափանվում է, և նրանք չեն կարողանում զանգահարել Երևան կամ նույնիսկ Լեռնային Ղարաբաղի սահմաններ: Ինտերնետի և հեռախոսի հասանելիության բացակայությունը կարող է կորստաբեր լինել արտակարգ իրավիճակների դեպքում:

Էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումը ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտում է:

դ. Խոշտանգումներից զերծ մնալու իրավունք

Էլեկրահաղորդման գծերի վերանորոգման ցանկացած աշխատանք կանխելու՝ Ադրբեջանի գործողությունները, միջազգային իրավունքի համաձայն, խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտում է: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածի, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «[ո]չ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածը սահմանում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»: Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանվում է հետևյալը.

Սույն Կոնվենցիայի նպատակների համար «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյանի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց:

Էլեկտրաէներգիայի անջատումները կյանքը տանջալից են դարձրել այն առումով, որ դրա պատճառով չկա բավարար սնունդ, ջեռուցում, ինտերնետ, աշխատանք և կրթություն: Օրինակ՝ 23LC-0007 վկան նշում է, որ ձմռանը՝ -10°C ջերմաստիճանի պայմաններում տան ջերմաստիճանը 3-5°C է լինում: Երբ ջեռուցումը միացնում են տունը տաքանում է մինչև 15°C, այնուհետև էլեկտրաէներգիան կրկին անջատվում է, և տունը սառչում է: Նա ասում է, որ շրջափակման ամենաուժեղ ազդեցությունը հոգեբանական ադեցությունն է: Օրինակ՝ տունը տաքացնել, իրենց սնունդը տաքացնել չկարողանալը կամ անջատումների ժամերն ավելացնելն այժմ ստիպում է, որպեսզի իրենք իրենց մասին հոգ տանել:

23LC-NK0028 վկան ասում է, որ հիմնական նպատակն այն է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կորցնի իր հույսը: Ապրելու համար նրանք ունեն սահմանափակ քանակությամբ

էլեկտրաէներգիա և նվազագույն անհրաժեշտ պայմաններ, բայց քանի որ նրանք ունեն երեխաներ, տարեցներ, հիվանդ մարդիկ, ուստի շատ խնդիրներ են առաջանում: Այս խնդիրները հանգեցրել են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան տառապանքների, ինչպես ներկայացվում է վերևում: Սա իրականացվում է էթնիկ զտումների միջոցով բնիկ հայ բնակչությանն ահաբեկելու կամ ստիպելու հեռանալ, կամ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի քաղաքական առաջնորդների միջոցով համաձայնություն ձեռք բերել Լեռնային Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին, ինչը կհանգեցնի բնիկ հայ բնակչության տեղահանմանը:

Այսպիսով էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումը խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ուղղակի խախտում է:

ե. Բավարար կենսամակարդակի իրավունք

Էլեկրահաղորդման գծերի վերանորոգման ցանկացած աշխատանք կանխելու՝ Ադրբեջանի գործողությունները բավարար կենսամակարդակի իրավունքի խախտում է: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության և բարեկեցության համար բավարար կենսամակարդակի իրավունք, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական օգնությունը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները, ինչպես նաև գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ պատշաճ միջոցներ ապահովելու իրավունք:

Նույն կերպ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածը սահմանում է. [Ս]ույն Դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի և նրա ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի և բնակարանի և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը:

23LC-NK0003 վկան պատմում է, որ գազի և էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով ջեռուցում չի եղել, իսկ իրենց շենքի վերելակները չեն աշխատել: Նորածին և փոքր երեխաներ ունեցող ընտանիքներ կան, ովքեր պետք է լվանան իրենց երեխաների հագուստը, մաքրեն և կերակուր պատրաստեն: Էլեկտրաէներգիայի անջատումը, ըստ 23LC-NK0003 վկայի, իրականացվում է մարդկանց վրա հուզական ճնշում գործադրելու և նրանց մարդու իրավունքներից զրկելու նպատակով:

Ինչպես նշվեց վերևում, էլեկտրաէներգիայի ընդհատումների պատճառով անբավարար սնունդը և ոչ պատշաճ բժշկական օգնությունը բավարար կենսամակարդակի իրավունքի ուղղակի խախտում է:

զ. Կրթության իրավունք

Էլեկտրահաղորդման գծերի վերանորոգման ցանկացած աշխատանք կանխելու՝ Ադրբեջանի գործողությունները կրթության իրավունքի խախտում է: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ [Յ]ուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք…»: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ Սույն Դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի կրթության իրավունքը»: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը»:

Շրջափակման հետևանքով առաջացած սննդի և ջեռուցման բացակայության պատճառով դպրոցները ստիպված են եղել փակվել[13]: 2023թ. հունվարի 19-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի բոլոր դպրոցներն անորոշ ժամանակով փակվել են բնական գազի մատակարարման ընդհատումների և էլեկտրաէներգիայի հովհարային անջատումների պատճառով[14] : Փետրվարին ընդհանուր առմամբ փակվել է 117 դպրոց և երեխաները զրկվել են կրթություն ստանալու հնարավորությունից[15]:

Ավելի վաղ՝ 2023 թվականի հունվարի 7-ին, տասնյակ ուսումնական կենտրոններ ժամանակավորապես փակվել էին սննդի դեֆիցիտի պատճառով[16]: Ըստ Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի՝ «41 մանկապարտեզ, 56 նախադպրոցական խումբ և առկա ուսուցմամբ գործող 20 ուսումնական հաստատություն անորոշ ժամանակով դադարեցրել են իրենց գործունեությունը, արդյունքում 6828 երեխա զրկվել է մանկապարտեզ հաճախելու և կրթություն ստանալու հնարավորությունից[17]»:

Նույնիսկ շրջափակման սկզբում, երբ դպրոցները բաց էին, աշակերտները տրանսպորտի և սննդի հետ կապված խնդիրներ ունեին: Օրինակ՝ որոշ ուսանողներ ճաշելու հնարավորություն չունեին, քանի որ հացաբուլկեղենի փռերը փակ էին, մոտակա խանութները դատարկ էին, իսկ սրճարանները փակվել էին դեռ 2020 թվականի պատերազմից հետո[18]: Էլեկտրաէներգիայի ընդհատումները և անկայուն ինտերնետ կապը ազդում էին ուսուցիչների՝ դասապլաններ կազմելու հնարավորության վրա[19]: դրանից հետևում է, որ ուսանողները նույնպես դժվարանում էին սովորել էլեկտրաէներգիայի ընդհատումների և անկայուն ինտերնետ կապի պատճառով: Հետևաբար, աշակերտները նույնպես իրենց դասերը հասցնելու հետ կապված դժվարություններ են ունեցել էլեկտրաէներգիայի անջատումների և անկայուն ինտերնետ կապի պատճառով:

23LC-0007 վկան հաստատում է, որ դպրոցները, այդ թվում՝ իր դստեր դպրոցը, փակվել են ցրտի պատճառով, և որ նրանք չեն կարողացել շարունակել իրենց ուսումն առցանց՝ առանց մշտական ինտերնետ կապի: 22LC-NK0011 վկան հաստատում է, որ մշտական ինտերնետ հասանելիության բացակայությունը ազդել է մեր երեխայի ուսման վրա: Նա օրինակ է բերում, որ նույնիսկ ուսուցիչներն են օգտագործում առցանց չաթի ֆորումներ՝ իրենց աշակերտներին տնային առաջադրանքների մասին տեղեկացնելու համար, որոնք ընդհատվում են ինտերնետի և էլեկտրաէներգիայի անջատումների պատճառով:

Շրջափակման սկզբից շատ են դեպքերը, երբ աշակերտները բաժանվել են իրենց ընտանիքներից կամ ուսուցիչներից[20]: Դրա հուզական ազդեցությունն ակնհայտ է եղել աշակերտների առաջադիմության և մոտիվացման վրա[21]: «Կոնֆլիկտի և անկայունության հետևանքները երեխաների առողջության վրա անչափելի են: Մայրերի վախը ոչ միայն պարզապես իրենց երեխաներին կերակրելու հետ է կապված: Այժմ շեշտը դրվում է նաև

[13] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/
[14] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/
[15] «Ջեռուցման բացակայության պատճառով դադարեցվել է Արցախի բոլոր դպրոցների աշխատանքը» https://mediamax.am/en/news/karabakh/50057/
[16] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/
[17] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/ : Տե՛ս նաև «Արցախում հազարավոր հայեր զրկված են ուսումնական հաստատություններ հաճախելու հնարավորությունից. Մարդու իրավունքների պաշտպան» https://www.armenpress.am/eng/news/1101506.html
[18] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/
[19] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/
[20] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/
[21] «Կրթությունը շրջափակման մեջ», Գայանե Ղազարյան https://evnreport.com/spotlight-karabakh/education-under-blockade/

երեխաների մտավոր կայունության պահպանման և ճանաչողական, հուզական և շարժողական կարողությունների անդառնալի վնասումից խուսափելու վրա»[22]:

Սակայն հրադադարից հետո սա առաջին դեպքը չէ, երբ Լեռնային Ղարաբաղում դպրոցները փակվում են Ադրբեջանի գործողությունների պատճառով: 2022 թվականի մարտին Լեռնային Ղարաբաղի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարություն էր տարածել այն մասին, որ բոլոր նախադպրոցական հաստատությունները, տարրական և միջնակարգ դպրոցները փակվել են ջեռուցման բացակայության պատճառով, ինչը համապատասխանում էր Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի գազամատակարարման դադարեցմանը[23]: Նախարարության հայտարարությունից օրեր առաջ հրապարակված՝ Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի դպրոցների 65 տոկոսը ջեռուցվում է գազով, ինչն ապահովում է Լեռնային Ղարաբաղի աշակերտների 60 տոկոսի կրթությունը: Մանկապարտեզներ երեխաների հաճախելիությունը նվազել է մինչև 22%, իսկ 12 մանկապարտեզ ընդհանրապես դադարեցրել է գործունեությունը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, արվեստի դպրոցների, բժշկական և երաժշտական քոլեջների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների 90%-ը նույնպես ջեռուցվում է գազով: Նրանք նույնպես ամբողջությամբ դադարեցրել են իրենց գործունեությունը:

Ինչպես նշված է ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 13 ընդհանուր մեկնաբանությունում, «Կրթությունն ինքնին մարդու իրավունք է, ինչպես նաև մարդու այլ իրավունքների իրացման անփոխարինելի միջոց»[24]:

13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «կրթությունն իր բոլոր ձևերով և բոլոր մակարդակներում պետք է ունենա հետևյալ փոխկապակցված և էական հատկանիշները. հասանելիություն, մատչելիություն, ընդունելիություն և հարմարվողականություն[25]: Կրթությունը պետք է լինի հասանելի, ինչը նշանակում է, որ գործող ուսումնական հաստատությունները և ծրագրերը պետք է հասանելի լինեն բավարար քանակով մասնակից պետության իրավասության սահմաններում: Այն, ինչ նրանց անհրաժեշտ է աշխատելու համար, կախված է մի շարք գործոններից, ներառյալ զարգացման պայմանները, որտեղ նրանք գործում են. օրինակ՝ բոլոր հաստատությունների և ծրագրերի համար միգուցե անհրաժեշտ լինեն շենքեր կամ մթնոլորտային ազդեցություններից պաշտպանելու այլ միջոցներ…[26]»:

Լեռնային Ղարաբաղում չի բավարարվում կրթության հասանելիության նույնիսկ ամենատարրական պահանջը: Ուսումնական հաստատության գործունեությունը խաթարվել է, քանի որ (1) հաստատությունները չեն կարող երեխաներին պաշտպանել առանց գազի ցածր ջերմաստիճանի ազդեցություններից, (2) երեխաները չեն կարող կենտրոնանալ, երբ սովամահ են լինում առանց սննդի, և (3) երեխաները չեն կարող օգտվել էլեկտրաէներգիայի և ինտերնետի

[22] «Լսեք Արցախում/Լեռնային Ղարաբաղում պաշարված մայրերին». Սիրանուշ Սարգսյան և Լին Զովիգյան https://www.newsweek.com/listen-mothers-besieged-artsakh-nagorno-karabakh-opinion-1774812

[23] «Արցախում դասերը դադարեցվել են» https://artsakh.news/am/news/235370

[24] ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 21-րդ նիստը, 1999թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 3-ը, Ընդհանուր մեկնաբանություն No. 13, 1-ին կետ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G99/462/16/PDF/G9946216.pdf?OpenElement: Տե՛ս նաև https://www.ohchr.org/en/special-procedures/sr-education/about-right-education-and-human-rights.

[25] ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 21-րդ նիստը, 1999թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 3-ը, Ընդհանուր մեկնաբանություն No. 13, 6-րդ կետ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G99/462/16/PDF/G9946216.pdf?OpenElement: Տե՛ս նաև https://www.ohchr.org/en/special-procedures/sr-education/about-right-education-and-human-rights.

[26] ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 21-րդ նիստը, 1999թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 3-ը, Ընդհանուր մեկնաբանություն No. 13, կետ 6(ա) https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G99/462/16/PDF/G9946216.pdf?OpenElement

միջոցով տրամադրվող ռեսուրսներից: Սա Ադրբեջանի շրջափակման ուղղակի և միանշանակ արդյունքն է, որը հանգեցրել է աննախադեպ հումանիտար ճգնաժամի և մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների պատճառ դարձել: Կրթության իրավունքը հստակ սահմանում է բոլոր անձանց որակյալ կրթություն ստանալու իրավունքը: Ադրբեջանի գործողությունները տասնյակ հազարավոր երեխաների զրկել են ցանկացած մակարդակի կրթություն ստանալու հնարավորությունից: Էլեկտրաէներգիայի անջատումները կրթության իրավունքի ուղղակի խախտում է:

5. Արցախէներգո

23LC-NK0006 վկան, ով «Արցախէներգո» ընկերության աշխատակից է, հետևյալ տեղեկություններն է ներկայացրել Լեռնային Ղարաբաղում էլեկտրաէներգիայի մատակարարման վերաբերյալ: 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո «Արցախէներգո»-ի վարչական շենքի միայն կեսն է մնացել: 2020թ. հոկտեմբերի 4-ին՝ առավոտյան ժամը 11:30-ի սահմաններում, վարչական շենքում բազմաթիվ մարդիկ են եղել, երբ այն սկսեցին ռմբակոծել, ինչի հետևանքով երկու խաղաղ բնակիչ զոհվել էր, մյուսները՝ վիրավորումներ ստացել: Մոտավորապես 5-10 ժամ Ստեփանակերտն ամբողջությամբ հոսանքազրկվել է, սակայն «Արցախէներգո»-ն կարողացել է վերականգնել էլեկտրաէներգիայի մատակարարումը: Վկան նշեց, որ իրենք շարունակել են աշխատել պատերազմի ժամանակ՝ հիվանդանոցները, հացի փռերը և կյանքի համար անհրաժեշտ մյուս օբյեկտներն էլեկտրականությամբ ապահովելու համար:

Իրավապաշտպան տարբեր կազմակերպությունների զեկույցում նշվում է, «Արցախէներգո»-ի վրա հարձակման ժամանակ արձակված արկերն ընկել էին քաղաքացիական անձանց տներից մեկի վրա և վնասել այն[27]: Ըստ «Human Rights Watch»-ի՝ հոկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը կասետային հրթիռներով հրետակոծվել է «Արցախէներգո»-ի տարածքը: Հոկտեմբերի 3-ին՝ ժամը 22:45-ին «Արցախէներգո»-ի վարչական շենքի հրետակոծության արդյունքում քաղաքը հոսանքազրկվել է: Այնուհետև, հոկտեմբերի 4-ին՝ կեսօրին մոտ, ադրբեջանական ուժերը հարվածել են վարչական շենքին և էլեկտրակայանին: Առաջին հարվածը հասցվել է գլխավոր մասնաշենքին՝ շարքից հանելով կառավարման կենտրոնը և դարձել քաղաքացիական երկու աշխատակիցների մահվան պատճառ, ինչպես վերևում նշվել էր 23LC-NK0006 վկայի կողմից, իսկ երկրորդ հարձակումը, որը տեղի էր ունեցել ժամը 13:00-ի սահմաններում, վնասել էր էլեկտրակայանը: Ստորև ներկայացված լուսանկարը, որը ցույց է տալիս «Արցախէներգո»-ի վնասված վարչական շենքը, արվել է փաստահավաք առաքելության կողմից և ներառվել ստորև ծանոթագրության մեջ ներկայացված զեկույցում: Մարտակերտում էլեկտրաէներգիայի մատակարարման վերականգնման աշխատանքներ կատարելիս սպանվել էր մեկ խաղաղ բնակիչ, ով «Արցախէներգո»-ի աշխատակից էր:

[27] «Մարդու իրավունքների խախտումներն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում» Փաստահավաք զեկույց, էջ 290-293 https://www.osf.am/wp-content/uploads/2022/08/Fact-Finding-Report_Final_ARM_WEB.pdf

23LC-NK0006 վկան պատմել է, որ 2023թ. հունվարի 9-ին մի շարք համապատասխան սարքավորումներով արձանագրվել էր էլեկտրահաղորդման գծի վթար Բերձորի տարածքում: Այն Հայաստանից սնուցող միակ բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային գիծն է: «ԱրցախԷներգո»-ի մասնագետները մի քանի ամիս է չեն կարողանում մոտենալ վթարի վայր՝ պարզելու, թե արդյոք վթարը բնական, թե միտումնավոր պատճառներ ունի, սակայն կասկածներ կան, որ էլեկտրահաղորդման գծի վթարը կանխամտածված է եղել, հակառակ դեպքում վերջին վեց ամիսների ընթացքում նրանց թույլ կտային վերանորոգել գիծը: Նույնիսկ միջազգային կազմակերպություններին դիմելուց հետո նրանց թույլ չեն տվել մոտենալ տարածքին՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար: Այդ ժամանակից ի վեր «ԱրցախԷներգո»-ն ստիպված է եղել հույսը դնել ՀԷԿ-երի վրա: Ներկայումս գործում է հինգ հիդրոէլեկտրակայան, որոնք բավարար չեն, ուստի «ԱրցախԷներգո»-ն էլեկտրաէներգիայի պլանային անջատումներ է իրականացնում: «ԱրցախԷներգո»-ն հիմնականում հույսը դնում է Սարսանգի ջրամբարի վրա, որի մակարդակն առանց այդ էլ կրիտիկական ցածր է, և եթե ոչ մի լուծում չտրվի, ապա որոշ ժամանակ անց Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն էլեկտրաէներգիա չի ունենա, կամ դրա մատակարարումը խիստ սահմանափակ կլինի: Առանց էլեկտրաէներգիայի Լեռնային Ղարաբաղը կկանգնի բժշկական օգնության, սննդի և եկամուտների հետ կապված խնդիրների առաջ: 23LC-NK0006 վկան ընդգծեց, որ պետք է լինեն նվազագույն կենսապայմաններ, հատկապես Լեռնային Ղարաբաղում ապրող երեխաների համար: Բացի այդ, նա մատնանշեց էլեկտրաէներգիայի անջատումների տնտեսական հետևանքները, որոնք բազմաթիվ ընկերությունների զրկեցին բիզնեսից:

Մինչև 2020 թվականի 44-օրյա պատերազմը Լեռնային Ղարաբաղը Հայաստանից էլեկտրաէներգիա էր ստանում Վարդենիսով և Գորիսով: Վարդենիսի գիծը կտրվել է Ադրբեջանի կողմից Քարվաճառի (Քելբաջար) շրջանի օկուպացիայի պատճառով: Մնացած միակ գիծը, որն անցնում է Լաչինի միջանցքով, վնասվել է 2023թ. հունվարի 9-ին տեղի ունեցած վթարի պատճառով: Մինչև 2020 թվականը Լեռնային Ղարաբաղում կար 36 հիդրոէլեկտրակայան,

սակայն պատերազմից հետո միայն 6 հիդրոէլեկտրակայան է մնացել հայկական կողմի վերահսկողության տակ: Էլեկտրահաղորդման գծերի վերանորոգման համար անհրաժեշտ սարքավորումները նախկինում բերվել են Հայաստանից, սակայն ներկայիս շրջափակման/ճանապարհների արգելափակման հետևանքով հնարավոր չի եղել ձեռք բերել այդ միջոցները:

Ստորև լուսանկարները Սարսանգի ջրամբարն է, որը տրամադրել է «ԱրցախԷներգո» ընկերությունը 2023թ. մայիսի 10-ին, ցույց է տալիս կրիտիկական վիճակը:

6. Եզրակացություն

Եզրափակելով, նշենք, որ էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումը և անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների կանխումն Ադրբեջանի կողմից հանգեցրել են Լեռնային Ղարաբաղում մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների, այդ թվում՝ կյանքի, տնտեսական ազատության, ազատության և անձնական անձեռնմխելիության, խոշտանգումներից զերծ մնալու, բավարար կենսամակարդակի, կրթության և այլ իրավունքների խախտումներ: Բացի այդ, Սարսանգի ջրամբարի ցամաքումը բնապահպանական լուրջ հետևանքներ կունենա տարածաշրջանի ողջ էկոհամակարգի համար: Արցախի, ինչպես նաև Ադրբեջանի որոշ շրջանների բնակչությունը կզրկվի բնականոն կյանքի համար անհրաժեշտ ջրային ռեսուրսներից:

Քանի որ խորանում է հումանիտար ճգնաժամը Լեռնային Ղարաբաղում և նվազում են Սարսանգի ջրի պաշարները, ամեն րոպե ավելի անհրաժեշտ է դառնում, որ Ադրբեջանը թույլ տա էլեկտրահաղորդման գծի վերանորոգումը՝ հետագա տառապանքները կանխելու համար: Դա անելը Ադրբեջանի բարոյական և իրավական պատասխանատվությունն է: